


418

1909 № 934

Ս Ա Տ Ե Տ Ր

Կ Ր Օ Ն Ի

ԵՎԱՆՈՂՅԱ
ԻՆՏԻՏՄԿԱ
ՅՕ. ԿՈՍԵՃԵՆԻ
Ակադեմիա Ռուս
ՍՍՏՐ



Ս Ա Տ Ե Տ Ր
Կ Ր Օ Ն Ի

Ա. ՏՄՐԻ ԺԲ. ՏԳ.

2(075)

U-15

1309

С 9 ртн-к
4082

Одобрено Попечительскимъ Совѣтомъ Кавказскаго Учебнаго Округа.

Դ Ա Ս Ա Տ Ե Տ Ր

2(075)

U-15

Կ Ր Օ Ն Ո

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

БИБЛИОТЕКА
ИЗДАНИЕ
1909



Ա. Տ Ա Ր Ի

Թ Ի Յ Լ Ի Ս

ԵԼԵԲՏԻԱԿԱՐԺ ՏՊԱՐԱԿ ԱՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՅԻ. ՄՈԼՈՏ 7
1909

4 2001

2 0 1 0

Մեր Հայր, որ երկնքումն ես. քո անունը սուրբ լինի. քո թագաւորութիւնը գայ. քո կամքը լինի՝ ինչպէս երկնքումը, այնպէս էլ երկրի վրայ. մեր ամենօրուայ հացը տուր մեզ այսօր. մեր պարտքը թող մեզ, ինչպէս որ մենք էլ մեր պարտապաններին ենք թողնում. մի ձգիր մեզ փորձութեան մէջ, այլ փրկիր մեզ չարից, որովհետեւ քոնն է թագաւորութիւնը և զօրութիւնը և փառքը յաւիտեանս. ամէն:

3. Ա.Ղ.ՕԹՔ ԴԱՍԻՑ ԱՌԱՋ

Ամենաբարի Աստուած, առաքեալ առ մեզ զՆորին Հոգւոյդ սրբոյ, զի պարգևեսցէ մեզ զմիտս և կազդուրեսցէ զզօրութիւնս հոգւոց մերոց, որպէսզի մեք ընդունելով զաւանդեալ մեզ ուսմունս, զարգասցուք թեզ՝ ըստեղծողիդ մերում ի փառս, ի մխիթարութիւն ծնողաց մերոց, յօգուտ եկեղեցւոյ և հայրենեաց:

Ամենաբարի Աստուած, ուղարկիր մեզ սուրբ Հոգուդ շնորհը, որ մեզ միաք պարգևէ, զօրացնէ մեր հոգու կարողութիւնները՝ որպէսզի ուսում

ստանանք, մեծանանք Ստեղծողիդ փառքի համար՝ մեր ծնողներին մխիթարելու և եկեղեցուն ու հայրենիքին օգտակար լինելու:

4. Ա.Ղ.ՕԹՔ ԴԱՍԻՑ ԵՏՈՅ

Գոհանամք զթէն, Արարիչ, զի արժանի արարեր զմեզ շնորհաց քոց՝ ընդունելութեան ուսմանս: Օրհնեա զմեծաւորս, զծնողս և զուսուցիչս մեր, որք առաջնորդեն մեզ ի գիտութիւն բարութեան և տուր մեզ կարողութիւն ի շարունակութիւն ուսմանս այսորիկ:

Շնորհակալ ենք քեզնից, արարիչ Աստուած, որ արժանացրիր մեզ ուսումն ստանալու: Օրհնիր մեր մեծաւորներին, ծնողներին և ուսուցիչներին, որոնք առաջնորդում են մեզ դէպի բարին. տուր մեզ ոյժ և կարողութիւն այս ուսումը շարունակելու:

5. Ա.Ղ.ՕԹՔ ՃԱՇԻՑ ԱՌԱՋ

Ճաշակեսցուք խաղաղութեամբ զկերակուրս, որ պատրաստեալ է մեզ

ի Տեառնէ, օրհնեալ է տէր ի պարգևս
իւր. ամէն:

Ողորդութեամբ ճաշակենք Աստուծոց պատ-
րաստած կերակուրը. օրհնեալ է Աստուած իւր
պարգևներով. ամէն:

Աչք ամենեցուն ի քեզ, Տէր, յուսան,
եւ դու տաս կերակուր նոցա ի ժամու-
րանաս զձեռն քո
եւ լցուցանես զամենեսեան
Քաղցրութեամբ կամովք քովք:

Ամենքի աչքն էլ քեզ են նայում, ով Աս-
տուած, դու տալիս ես նրանց կերակուր իւր
ժամանակին, բայց ես անում ձեռք և լցնում ա-
մենին քո ողորմութիւնով:

6. ԱՂՕԹՔ ՃԱՇԻՑ ԵՏՈՅ

Զլիութիւն սեղանոյս անհատ և
աննուազ արասցէ Քրիստոս Աստուած
մեր, որ զմեզ կերակրեաց և լիացոյց՝
նմա փառք յաւիտեանս. ամէն:

Ով մեր Քրիստոս Աստուած, լի և առատ ա-
րա այս սեղանը, քեզանից յաւիտեան շնորհակալ
ենք, որ մեզ կերակրեցիր և լիացրիր. ամէն:

7. ԱՂՕԹՔ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ ԱԾՆԻ

Անկանիմք առաջի քո Աստուածածին,
եւ աղաչեմք զանարատ զկոյսդ,
Բարեխօսեա վասն անձանց մերոց
եւ աղաչեա զՄիածին որդին
Փրկել զմեզ ի փորձութենէ
եւ յամենայն վտանգից մերոց:

Քո առաջն ենք ընկնում, ով Աստուածա-
ծին և աղաչում ենք քեզ՝ անարատ կուսիդ, բա-
րեխօսիր մեզ համար և աղաչիր Միածին որ-
դուն, որ ազատէ մեզ փորձութիւնից և ամեն
տեսակ վտանգներից:

8. ԱՂՕԹՔ ԹԱԳԱՒՈՐԻ ՀԱՄԱՐ

Տէր Աստուած մեր, կեցո զամե-
նաբարեպաշտ Թագաւորն և զկայսրն
Ռուսաց զՆիկոլայ Ալէքսանդրովիչն:
Զորացո զնա. օգնեա զաւակաց և զօ-

րաց նորա՝ պահելով զամենեսին ի խաղաղութեան:

Տէր Աստուած, կեանք տուր Ռուսաց ամենաբարեպաշտ Թագաւոր և Կայսր Նիկոլայ Ալէքսանդրովիչին: Զօրացրու նրան, օգնիր նրա զաւակներին, զօրքին և ամենին խաղաղութեան մէջ պահպանիր:

Բ.

9. Տ Ա Ս Ն Պ Ա Տ Ո Ւ Ի Ի Ր Ա Ն

1. Ես եմ տէր Աստուած քո: Բո տէր Աստուածը ես եմ:

2. Մի արասցես Կուռք չընես: Կուռք չընես:

3. Մի առնուցուս Աստուածուն անունը զուր տեղը չիշես: Աստուածուն անունը զուր տեղը չիշես:

4. Յիշես չիր զօր Շաբաթ օրը սուրբ պաշարաթու՝ սրբել զնա: Շաբաթ օրը սուրբ պահել:

5. Պատուեա զհայր Բո հօրն ու մօրը պաքո և զմայր: Բո հօրն ու մօրը պատուիր:

6. Մի սպանաներ: Ոչ ոքի չսպանես:

7. Մի շնար: Շնութիւն չանես:

8. Մի գողանար: Գողութիւն չանես:

9. Մի սուտ վկայեր: Սուտ վկայութիւն չտաս:

10. Մի ցանկանար տան ընկերի քո և մի ամենայնի, զինչ ընկերի քո իցէ: Աչք մի ունենար ոչ քո ընկերով տանը և ոչ նրա ունեցածին:

10. Հ Ա Ի Ա Տ Ո Յ Հ Ա Ն Գ Ա Ն Ա Կ Ը

Հաւատամք ի մի Հաւատում ենք որ կայ Աստուած ի Հայրն մի Աստուած, որ նա ամենակալ Հայր է, երկրիչն երկնի և երկրի՝ երկերեւեց և աներևութիւնների՝ երևութից: Կնքի ու երկրի՝ երկերեւեցի և աներևութիւնների ստեղծողն է:

Եւ ի մի տէր Յիշաւատում ենք որ

սուս Քրիստոս. յՈր-
դին Աստուծոյ՝ ճը-
նեալն յԱստուծոյ
հօրէ՛ միածին, այ-
սինքն յէութենէ
Հօր:

Աստուած յԱս-
տուծոյ, լոյս ի լու-
սոյ. Աստուած ճըշ-
մարիտ յԱստուծոյ
ճշմարտէ, ծնունդ
և ոչ արարած. նոյն
ինքն ի բնութենէ
Հօր, որով ամենայն
ինչ եղև յերկինս և
ի վերայ երկրի՛ ե-
րևելիք և աներե-
ւոյթք:

Որ յաղագս մեր
մարդկան և վասն
մերոյ փրկութեան

Յիսուս Քրիստոսը մեր
միակ տէրն է, որ նա
Հայր Աստուծ միածին
որդին է, այսինքն նրա
էութիւնից է:

Հաւատում ենք, որ նա
Աստուած է Աստուծոց,
լոյս է՝ լուսից, ճշմարիտ
Աստուած է, ճշմարիտ
Աստուծոց, ծնած է և ոչ
թէ ստեղծուած: Հաւա-
տում ենք, որ նա նոյն
Հայր Աստուծ բնութիւ-
նից է, որով ամեն բան
եղաւ երկնքում և երկ-
րիս վրայ՝ թէ երևելինե-
րը և թէ աներևոյթները:

Հաւատում ենք, որ նա
մարդկանցս փրկութեան
համար իջաւ երկնքից,

իջեալ ի յերկնից՝ մարմին առաւ, մարդ-
մարմնացաւ, մար-
դարձաւ և ծնաւ կաթա-
ղացաւ, ծնաւ կա-
րեալ կերպով, սուրբ Հոգ-
տարելապէս ի Մա-
րիամայ Սրբոյ կու-
սէն Հոգւովն սրբ-
բով: Որով էառ
մարմին, հոգի և
միտք, և զամենայն
որ ինչ է ի մարդ՝
ճշմարտապէս և ոչ
կարծեօք:

Չարչարեալ, խա-
չեալ, թաղեալ, յեր-
րորդ աւուր յա-
րուցեալ, ելեալ ի
յերկինս նովին
մարմնով՝ նստաւ
ընդ աջմէ Հօր:

Փալոց է նովին
մարմնով և փառօք

մարմին առաւ, մարդ-
դարձաւ և ծնաւ կաթա-
ղացաւ, ծնաւ կա-
րեալ կերպով, սուրբ Հոգ-
տարելապէս ի Մա-
րիամայ Սրբոյ կու-
սէն Հոգւովն սրբ-
բով: Որով էառ
մարմին, հոգի, միտք և
այն ամենն, ինչ որ կայ
մարդու մէջ՝ իսկապէս
և ոչ թէ կարծեօք:

Հաւատում ենք, որ նա
չարչարուեց, խաչուեց,
թաղուեց, երրորդ օրը
յարութիւն առաւ, նոյն
մարմնով երկինք համ-
բարձաւ ու նստաւ Հօր
աջ կողմը:

Հաւատում ենք, որ նա
պէտք է գայ նոյն մարմ-

Հօր, ի դատել ըզ- նով և Հօր փառքով՝
 կենդանիս և զմեռ- կենդանիներին ու մե-
 եալս, որոյ թագա- ոածներին դատելու և
 ւորութեան ոչ գոյ որի թագաւորութիւնը
 վախճան: վերջ չի ունենայ:

Հաւատամք և ի Հաւատում ենք նաև
 սուրբ Հոգին՝ յա- սուրբ Հոգուն, որ նա ոչ
 նեղն և ի կատար- ոքից չէ ստեղծուել, կա-
 եալն, որ խօսեցաւ տարեալ Աստուած է, որ
 յօրէնս եւ ի մար- խօսել է օրէնքի, մարգա-
 գարէս և յաւետա- ղէների և աւետարանե-
 րանս: Որ էջն ի րի մէջ, որ Յորդանան
 Յորդանան, քարոզ- զեան իջաւ, վկայեց Աս-
 եաց զառաքեալն և տրծուց ուղարկուած Քր-
 բնակեցաւ ի սուրբ- րիստոսի մասին և բնա-
 սրն: կուեց սրբերի մէջ:

Հաւատամք և ի Հաւատում ենք նաև
 միմիայն ընդհան- միայն մի ընդհանրական
 րական և առաքե- և առաքելական եկեղե-
 լական սուրբ եկե- ցու — մի մկրտութեան,
 ղեցի՝ ի մի մկրտու- ապաշխարութեան, մեղ-

թիւն, յապաշխա- քերի քաւութեան և թո-
 րութիւն, ի քա- դութեան, մեռելների յա-
 ւութիւն և ի թո- րութեան, հոգիների և
 ղութիւն մեղաց, մարմինների վերջին դա-
 ի յարութիւն մե- տաստանին, երկնքի ար-
 ուելոց, ի դատաս- քայութեանը և յաւիտե-
 տանն յաւիտենից՝ նական կեանքին:
 հոգւոց և մարմնոց,
 յարքայութիւն երկ-
 նից և ի կեանսն յա-
 ւիտենականս:

11. ՍՈՒՐԲ ԿՈՅՍ ՄԱՐԻԱՄԻ ԾՆՈՒՆԴԸ ԵՒ ՏՄ-
 ՃԱՐԻՆ ԸՆԾԱՅՈՒԻԸ

Քանանացւոց երկրում մի քաղաք
 կար՝ անունը Նազարէթ: Այդ քաղա-
 քում ապրում էր մի բարեպաշտ մարդ
 Յովակիմ անունով՝ իւր Աննա կնոջ
 հետ: Սրանք որդի չունէին, դրա հա-
 մար էլ շատ էին տխրում և Աստծուն

միշտ աղօթում էին, որ իրանց մի գա-
 ւակ պարգևէ: Մի անգամ էլ աղօթելիս
 խոստացան, որ եթէ Աստուած իրանց
 խնդիրը լսէ և մի որդի պարգևէ, Աստ-
 ծուն կրնձայեն, որ տաճարին ծառայէ:
 Աստուած լսեց բարեպաշտ ծնողների
 աղօթքը և մի աղջիկ պարգևեց նրանց,
 որի անունը Մարիամ դրին: Երբ աղ-
 ջիկը երեք տարեկան դարձաւ, Յովա-
 կիմս ու Աննան, ինչպէս խոստացել էին,
 նրան տաճար տարան և ընծայեցին
 Աստծուն, իսկ իրանք դարձան Նազա-
 րէթ: Մարիամը մնաց տաճարում. քա-
 հանայապետը նրա ուսուցիչն էր. սո-
 վորեցնում էր նրան Սուրբ գիրք կար-
 դալ, աղօթել և տաճարին ծառայել:
 Մարիամի նման ուրիշ շատ աղջիկ-
 ներ կային այնտեղ: Մարիամը մնաց
 տաճարում մինչև 14 տարեկան դառ-
 նալը: Նրա ծնողները մեռան, ուստի
 քահանաները Մարիամին յանձնեցին

իւր ազգական Նազարէթցի ծերունի
 Յովսէփին, որի մօտ և ապրում էր:
 Յովսէփն արհեստով հիւան էր:

Սուրբ կոյս Մարիամի ծննդեան տօնը կա-
 տարում ենք սեպտեմբերի 8-ին, իսկ տաճարին
 ընծայուիլը՝ նոյեմբերի 21-ին:

12. Ա Ի Ե Տ Ո Ի Մ Ն

Մարիամը, ինչպէս տաճարում, այն-
 պէս էլ Յովսէփի տանը, ազատ ժա-
 մերին Սուրբ գիրք էր կարդում և ա-
 ղօթում:

Մի անգամ, երբ Մարիամն աղօ-
 թում էր, Գաբրիէլ հրեշտակը երևաց
 նրան և ասաց. «Ողջոյն քեզ, Մա-
 րիամ, Աստուած քեզ հետ է»: Երբ
 Մարիամը հրեշտակին տեսաւ, վախե-
 ցաւ ու մտածում էր, թէ ի՞նչու հա-
 մար է հրեշտակը իւր մօտ գալիս և
 ողջունում: Հրեշտակն ասաց. «Մի վա-
 խիր, Մարիամ, Աստուած քեզ շատ

է սիրում, դու մի որդի կունենաս և նրա անունը Յիսուս կզնես: Նա Աստու-



ծու որդի կկոչուի և բոլոր մարդկանց կխրատի, կբարոզի նրանց Փրկիչը կը լինի:

Մարիամը խոնարհ կերպով պատասխանեց և ասաց. «Ես Աստուծու ազախինն եմ, ինչպէս նրա կամքն է, թող այնպէս էլ լինի»: Սրանից ետոյ հրեշտակը հեռացաւ Մարիամից:

Գարբիէլ հրեշտակի Մարիամ կուսին աւետիք տալը՝ տօնում ենք ապրիլ ամսի 7-ին: Այդ տօնի անունն է Աւետումն:

13. ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԸ

Հին ժամանակ, երբ թագաւորներն ուզում էին իմանալ, թէ իրանց երկրի մէջ քանի մարդ կայ, հրամայում էին, որ ամեն մարդ գնայ իւր հայրենի քաղաքը, այնտեղի ցուցակի մէջ գրուի և ապա սկսում էին համարել: Այդպիսի մի հրաման դուրս եկաւ հէնց Յիսուս Քրիստոսի ծննդեան ժամանակ:

Յիսուսի ծնողները—Յովսէփն ու Մարիամը կենում էին Նազարէթ քա-

ՀԱՅԿՍՏԱՆԻ
ԳՐԱԳԻՏԱԿԱՆ
ԲՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆ
ՀԱՅԿԱՍՏԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆ

36113-66

մեծ պան գրադար
ГСС Библиотечка
ՀԱՍՏ-ԱՐՄ ԵՍՐ
ԿՄ Ա. ՄՅՈՒՆԿՅԱՆԳ
ՄԱՅԻՍ 1978

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ

զաքում: Բայց որովհետև Յովսէփը
Բեթղէհէմցի էր, այդ պատճառով վեր



կացաւ և եկաւ իւր հայրենի քաղա-
քը: Յովսէփն աղքատ էր. քաղաքի մէջ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ

չկարողացաւ տուն վարձել, դրա հա-
մար վեր եկաւ քաղաքից դուրս մի
այրում, ուր հովիւները վատ եղանա-
կին իրանց ոչխարներն էին բերում:

Այդ գիշեր Յիսուս ծնունեց: Ծնող-
ները փաթաթեցին նրան բարուրի մէջ
և դրին մարում:

Բեթղէհէմը մեր երկրի նման ցուրտ
չէ, այնտեղ տաք է— ձմեռը դրսում
կարելի է քնել: Այն երկրի հովիւնե-
րը ամառ ձմեռ իրանց ոչխարները
դուրսն էին պահում, միայն անձրևա-
յին եղանակին էին այրը բերում:

Երբ Յիսուս ծնունեց, ոչ ոք չգի-
տէր— հովիւները դաշտումն էին և ի-
րանց ոչխարներն էին պահում: Յան-
կարժ օդի մէջ հրեշտակ երևաց: Այս
բանից հովիւները վախեցան: Հրեշ-
տակն ասաց. «Մի վախենաք, ես ձեզ
և բոլոր մարդկանց մեծ ուրախու-

39/12-99



Թիւն եւ յայտնոււմ — ձեզ համար
Բեթղէհէմոււմ փրկիչ է ծնուելոյ, նա
այրոււմն է, բարուրոււմ փաթաթած և
մարի մէջ դրած»: Այս խօսքերից ե-
տոյ յանկարծ բազմաթիւ հրեշտակ-
ներ երեւացին, որոնք երգում էին և
ասում. «Փառք ի բարձունս Աստու-
ծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մար-
դիկ հաճութիւն» — փառք Աստծուն
երկնքումը, այսուհետեւ երկրիս վրայ
խաղաղութիւն, մարդկանց մէջ սէր և
միաբանութիւն կլինի:

Այնուհետեւ հրեշտակները հեռա-
ցան: Հովիւներն ասացին մէկ մէկու-
«Գնանք Բեթղէհէմ և տեսնենք այս
ինչ բան է, որ Աստուած ցոյց տուեց
մեզ»: Նրանք շտապով եկան և գտան
Մարիամին, Յովսէփին և մանկան բա-
րուրի մէջ փաթաթած ու մարում դրած:
Երբ տեսան, փառք տուին Աստծուն,
երկրպագեցին մանուկին, այրից դուրս

եկան և ամեն պատահողի աւետիք
էին տալիս ու ասում, թէ փրկիչը
ծնուել է:

Յիսուսի ծնունդը կատարում ենք յունուա-
րի 6-ին:

Հ ա ր ա կ ա ն ծ ն ն դ ե ա ն

Խորհուրդ մեծ և սքանչելի
Որ յայսմ աւուր յայտնեցաւ,
Հովիւք երգեն ընդ հրեշտակս՝
Տան աւետիս աշխարհի:

Այսօր մեծ և զարմանալի խորհուրդ յայտ-
նուեց—հովիւները հրեշտակների հետ երգում են
և աշխարհին աչքալոյս տալիս:

Ծնաւ նոր արքայ
Ի Բեթղէհէմ քաղաքի,
Որդիք մարդկան օրհնեցէք,
Զի վասն մեր մարմնացաւ:

Նոր թագաւոր ծնուեց Բեթղէհէմ քաղա-
քում, մարդիկ, օրհնեցէք նրան, որովհետև մեզ
համար մարդ դարձաւ:

14. ՔՍՈՒՍՈՒՆ ՕՐԱԿՍՆ ՅԻՍՈՒՍԻՆ ՏԱՆՈՒՄ
ԵՆ ՏԱՃԱՐ

Հրէաների մէջ սովորութիւն էր,
ով անդրանիկ և արու զաւակ կունե-
նար, քառասներորդ օրը պէտք է գը-
նար Երուսաղէմի տաճարը. մանկա-
նը նուիրէր Աստծուն. զոհ անէր և յետ
գնէր: Հարուստ ծնողները զոհում էին
մի գառը, իսկ աղքատները՝ մի զոյգ
աղաւնի կամ տատրակ:

Երբ Յիսուս քառասուն օրական
դարձաւ, ծնողները նրան էլ տարան
Երուսաղէմի տաճարը, և որովհետև նը-
րանք աղքատ էին, հետները վերցրին
մի զոյգ աղաւնի:

Այդ ժամանակ Երուսաղէմում կե-
նում էր մի ծերունի մարգարէ Սի-
մէօն անունով: Նա խնդրել էր Սուրբ
Հոգուն, որ չմեռնի՝ մինչև Յիսուսին
աչքով տեսնի: Երբ Յիսուսին տաճար
բերին, Սիմէօն ծերունին Սուրբ Հոգ-

ևով իմացաւ նրա գալը, դուրս եկաւ
նրա առաջ, գրկեց, փառք տուեց Աս-
տծուն և ասաց. «Տէր Աստուած, այժմ



ան իմ հոգին, որովհետև ես տեսայ
Փրկչին, որին սպասում էի: Յովսէփն
ու Մարիամը զարմանում էին այս խօս-
քերի վրայ:

Տաճարում մի կին մարգարէ էլ
կար՝ Աննա անունով: Սա ճանաչեց
Յիսուսին. փառաբանում էր Աստծուն
և ամենին պատմում էր, թէ նա այն
Փրկիչն է, որ Աստուած խոստացել է
մարդկանց:

Այս տօնը կատարում ենք փետրուարի 14-ին.
տօնի անունն է—Տեառնընդառաջ:

15. ՏԱՄՆԵՐԿՈՒ ՏԱՐԵԿԱՆ ՅԻՍՈՒՍ ԳՆՈՒՄ Է
ՏԱՃԱՐ

Հրէաները մեզ նման ամեն քա-
ղաքում կամ գիւղում եկեղեցիներ չու-
նէին: Նրանք միայն մի տաճար ու-
նէին, այն էլ Երուսաղէմ քաղաքում:
Դրա համար ամեն տարի հեռու տե-
ղերից շատ ուխտաւորներ էին գալիս,
մանաւանդ Չատկի տօնին: Ուխտա-
ւորներն այնքան շատ էին լինում, որ
քաղաքի մէջ այլ ևս տեղ չէր լինում,
զրա համար քաղաքից դուրս լեռների

վրայ վրաններ էին խփում և այնտեղ կենում: Տօնը տևում էր եօթն օր: Փոքրերին չէին տանում, վախենում էին, որ բազմութեան մէջ չկորչեն:

Յիսուսի ծնողներն էլ Չատկի տօնին ամեն տարի ուխտ էին գնում: Երբ Յիսուս տասն երկու տարեկան դարձաւ, առաջին անգամ նրան էլ հետները տարան Աստծու տանն աղօթելու:

Տօնի օրերն անցան: Ծնողները կամենում էին Նազարէթ դառնալ, բայց յանկարծ տեսան, որ Յիսուս մանուկը չկայ: Քաղաքի մէջ երկար փնտռեցին, բայց չգտան: Կարծեցին թէ ծանօթների կամ հարևանների հետ Նազարէթ դարձած կլինի, դրա համար Երուսաղէմից դուրս եկան, մի օրուայ ճանապարհ եկան, հասան իրանց ծանօթներին, հարց ու փորձ արին, բայց չգտան: Նորից ետ դարձան Երուսա-

ղէմ: Մի օր էլ այստեղ փնտռեցին և երրորդ օրը տաճարում գտան նրան: Յիսուս այստեղ վիճաբանում էր



վարդապետների հետ—նրանց հարցեր էր տալիս և պատասխանում առաջարկած հարցերին: Ամենքն էլ զար-

մանուկ էին նրա իմաստուն պատասխանների վրայ և ասում էին—*հրտեղից գիտէ սա այսքան բաներ: Ծնողները, երբ Յիսուսին տեսան, շատ ուրախացան: Մայրն ասաց. «Որդեակ, այդ ինչ բերիք մեր գլխին—երեք օր է՛ ես և հայրդ քեզ փնտռում ենք»:* Յիսուս պատասխանեց. *«Մի՞թէ չգիտէիք, որ ես իմ հօր տանը կլինեմ»:* Մրանից ետոյ Յիսուս ծնողների հետ Նազարէթ դարձաւ, հնազանդ էր — լսում էր նրանց խօսքին և օգնում էր հօրը հիւսնուլթեան մէջ:

16. ՅԻՍՈՒՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

Յորդանան գետի ափերում մի իմաստուն մարդ էր բնակւում՝ Յովհաննէս անունով: Նա մարգարէ էր—մարդիկ ամեն կողմից գալիս էին սրամօտ, խորհուրդ էին հարցնում և խոս-

տովանում էին իրանց մեղքերը: Ով խոստանում էր չկրկնել իւր սխալները, Յովհաննէսը նրան մկրտում էր Յորդանան գետի մէջ և ասում էր—



ինչպէս որ ես ձեր մարմինը մաքրում եմ, այնպէս էլ դուք ձեր սրտերը պիտի մաքրէք:


Յիսուս ևս եկաւ Յովհաննէսի մօտ մկրտուելու: Նա արդէն 30 տարեկան

էր: Դեռ չէր մօտեցել Յիսուս, Յովհաննէսը հեռուից ճանաչեց նրան և բարձր ձայնով ասաց իւր մօտ կանգնողներին. «Ահա գալիս է Աստծու գառը, սա պէտք է մարդկանց ազատէ իրանց մեղքերից»:

Յիսուս մօտեցաւ Յովհաննէսին և յայտնեց, որ կամենում է նրանից մկրտուել: Յովհաննէսը մերժեց և ասաց. «Ես պէտք է բեզնից մկրտուեմ, դո՞ւ ես ինձ մօտ գալիս»: Յիսուս պատասխանեց. «Մկրտիր ինձ, որովհետև դու տարիքով ինձնից մեծ ես»: Սրբանից ետոյ Յովհաննէսը չհակառակեց և մկրտեց Յիսուսին Յորդանան գետի մէջ:

Երբ Յիսուս մկրտուեց և ջրից դուրս եկաւ, երկինքը բացուեց և Սուրբ Հոգին աղաւնու կերպարանքով իջաւ Յիսուսի վրայ: Աստուած էլ վերևից ձայն տուաւ. «Դա է իմ սիրելի որ-

դին, որին ես հաւանեցի, դրան լսեցէք»: Շատ քիչ մարդիկ գիտէին, թէ



Յիսուս Աստծու որդին էր, բայց այժմ


ամենքն էլ պարզ կերպով տեսան և հաւատացին, որ նա Աստուծոյ որդին է: Իրա համար էլ մկրտութեան օրը մարդիկ իրար շնորհաւորում են և ասում. «Շնորհաւոր յայտնութիւն»:

Յիսուսի ծննդեան և մկրտութեան սօնը կատարում ենք միասին յունուարի 6-ին:

17. ՅԻՍՈՒՍ ՔԱՐՈՉՈՒՄ Է ԵՒ ԲԺՇԿՈՒՄ

Յիսուս իւր մկրտութիւնից ետոյ սկսեց շրջել Երկրի մէջ և ամեն տեղ քարոզում էր ու բժշկում—կոյրերին աչք էր տալիս, կաղերին՝ ոտք, խուլերին՝ լսողութիւն և մեռելներին յարութիւն էր տալիս: Յիսուս օր ու գիշեր հանգիստ չունէր, ման էր գալիս ամեն տեղ և քարոզում էր: Ով տխուր էր, մխիթարում էր: Հարուստներին ասում էր, որ իրանց ունեցածից աղքատներին էլ բաժին տան: Ամենին էլ ասում էր, որ միմեանց սի-

րեն և օգնեն իրա նման: Փոքրերին խրատում էր, որ ծնողներին, լսեն և



ուսուցիչներին յարգեն: Յիսուս այնպէս սիրուն էր քարոզում, որ ժողո-

վուրդն էլ չէր գնում քահանաների մօտ, այլ միշտ գալիս էին նրա քարոզը լսելու: Քահանաներն ասում էին—եթէ այսպէս թողնենք, ամենքն էլ Յիսուսի մօտ կգնան, էլ մեզ մօտ ոչ ոք չի գայ, մեր պատիւը և արդիւնքը կպակասի: Այս պատճառով քահանաները թշնամացան Յիսուսի հետ և մտածում էին նրան սպանել տալ: Բացի դրանից Յիսուս ինչ որ խօսքով քարոզում էր, նոյնը գործով էլ ցոյց էր տալիս, իսկ քահանաները միայն խօսում էին:

18. ՄԱՐԻԱՄ ԵՒ ՄԱՐԹԱ:

Մի անգամ Յիսուս քարոզելով եկաւ իւր ծանօթ Ղազարոսի մօտ, որ կենում էր Բեթանիա գիւղում՝ Երուսաղէմին մօտիկ: Ղազարոսը երկու քոյր ունէր. մէկի անունը Մարթայ էր, իսկ միւսին՝ Մարիամ: Երկու քոյրերն էլ Յիսուսին շատ էին սիրում: Երբ իմա-



ցան, որ Յիսուս հիւր է եկել՝ էլ չգիտէին թէ ինչպէս պատիւ տան նրան: Մարիամը նստեց Յիսուսի մօտ և ուշադրութեամբ լսում էր նրա քարոզները: Իսկ Մարթան մեծ պատրաստութեան մէջ էր—աշխատում էր, որքան կարելի է, լաւ կերակուրներ պատրաստել Յիսուսի համար:

Մարթան երբ տեսաւ, որ Մարիամը չի գալիս իրան օգնելու, եկաւ Յիսուսի մօտ և ասաց. «Տէր, տեսնու՞մ ես, որ քոյրս ինձ մենակ է թողել, ասա, որ գայ և ինձ օգնէ»: Յիսուս պատասխանեց. «Մարթա, Մարթա, կարիք չըկայ տեսակ տեսակ կերակուրներ պատրաստելու, մի տեսակ էլ լինի, բաւական է ինձ համար: Իո՞ւ կարող ես քո քոյր Մարիամից օրինակ վերցնել, նա աւելի լաւ ձևով է պատուում ինձ, նա լսում է իմ քարոզները—ով ինձ

սիրում է, թող իմ խօսքերը լսէ և կատարէ»:

Մրանով Յիսուս մեզ սովորցնում է, որ Մարթայի պէս աշխատասէր լինենք և Մարիամի նման մեծի խօսքը լսող:

19. Յ Ո Ւ Դ Ա Յ

Յիսուս ունէր 12 աշակերտ. նրանք կոչւում են առաքեալներ: Մրանցից մէկը, որի անունը Յուդայ էր, լաւ մարդ չէր, աչքածակ էր, փող շատ էր սիրում: Զատիկը մօտեցել էր: Այդ տօնից առաջ Յուդան ծածուկ գնաց Յիսուսի թշնամիների — քահանաների մօտ և ասաց. «Ի՞նչ կտաք ինձ, որ Յիսուսին ձեզ մատնեմ»: Նրանք ուրախացան և երեսուն արծաթ փող խոստացան:

Այնուհետև Յուդան յարմար ժամանակ էր փնտռում թէ ինչպէս Յի-


սուսին մատնէ, որ նա չիմանայ: Բայց Յիսուս Աստծու որդի էր, նա ամեն բան գիտէր: Յիսուս տեսաւ, որ Յուդան իրեն պիտի մատնէ և իւր մահը մօտենում է, ուզեց վերջին անգամ իւր բոլոր աշակերտներին հետ միասին Չատկի ընթրիքն ուտել: Յիսուս կամեցաւ էլի մի անգամ սրտանց խօսել նրանց հետ, խրատել և այնպէս բաժանուել:

20 ՈՏՆԱԼՈՒՄՅ

Երեք օր էր մնացել մինչև հրէաների Չատկիը: Այդ օրերում նրանք ուտում էին բազարջ հաց և խորոված գառը: Աւագ հինգշաբթի օրը Յիսուս պատուիրեց իւր աշակերտներին վերնատան մէջ ընթրիք պատրաստեն, որ Չատկիը միասին կատարեն: Աշակերտներն էլ այնպէս արին, ինչպէս որ Յիսուսն ասաց: Երեկոյ-

եան Յիսուս իւր տան և երկու աշակերտներին հետ սեղան նստեց և ասաց. «Սրտով ցանկացայ այս ընթրիքը ձեզ հետ ուտել՝ մահիցս առաջ»: Հրէաները սովորութիւն ունէին հացից առաջ լուացուել, ուստի Յիսուս այս ասելուց ետոյ՝ ընթրիքից վերկացաւ, հանեց վերևի շորերը, մէջքին մի սրբիչ կապեց, ջուրն ածեց կոնքի (աւազանի) մէջ, սկսեց աշակերտներին ոտները լուանալ և սրբել: Ոտները լուանալուց ետոյ Յիսուս ասաց իւր աշակերտներին, «Տեսա՞ք ես ինչ արի: Դուք ինձ կանչում էք տէր և վարդապետ, շատ լաւ: Եթէ ես ձեր ոտը լուացի, ուրեմն դուք էլ ամենի հետ այդպէս խոնարհ կվարուէք»: Սրբանից ետոյ ընթրիքի նստեց և տրխուր ձայնով ասաց իւր աշակերտներին. «Չեզնից մէկն այս գիշեր ինձ պիտի մատնէ»: Այս նրա համար ա-

աաց, որ իրան մատնող աշակերտն
զգուշանայ, բայց ի զուր: Յուզան այն-



պէս էր ցոյց տալիս իրան, որպէս թէ
ինքը չէ մատնողը և ոչինչ չգիտէ:

Աշակերտներն այս խօսքերի վրայ
տրտմեցան և միմեանց էին նայում—
չգիտէին թէ ում մասին է ասում:
Ամեն մէկը տեղից վեր էր կենում
և հարցնում. «Տէ՛ր մի՞թէ ես եմ»:

Յուզան էլ հարցրեց. «Մի՞թէ ես եմ,
վարդապետ»: Յիսուս պատասխանեց.
«Դ՛ն ես ասում», ետոյ աւելացրեց,
«զնա, ինչ անելու ես, շուտով արա»: Յուզան երբ տեսաւ, որ Յիսուս, ամեն բան գիտէ, ամօթից է՛լ չկարողացաւ մնալ այնտեղ, վերկացաւ և զնաց Յիսուսի թշնամիների մօտ: Արդէն երեկոյ էր—մի՞նել էր:

Աւագ հինգշաբթի օրը քահանան եկեղեցում կատարում է ոսնալուսյի կարգը և կարագ իւղ է բաժանում:

Ո տ ն ա լ ու ա յ ի շ ա ր ա կ ա ն

Այսօր կանգնեցաւ

Աւագան մկրտութեան

ի թողութիւն մեղաց մեղոց:

Այսօր հաստատուեց մկրտութեան աւագան՝
մեր մեղքերի թողութեան համար:

Այսօր Տէրն մեր

Հուանայր զոստ աշակերտաց

Եւ պատուիրէր զայս ասելով:

Այսօր մեր տէր Յիսուս լուսնում էր իւր աշակերտների ոտները և պատուիրելով ասում էր.

Մի ոմն ի ձե՛նջ եղարք,

Մատնելոց է զիս 'ի մահ

եւ որոշի յաշակերտացդ:

«Ձեզնից մէկը, եղբայրներ, ինձ մահուան պիտի մատնէ և բաժանուի աշակերտներիցդ»:

21. ԽՈՐՀՐԴԱԻՈՐ ԸՆԹՐԻՔ

Երբ Յուզան դուրս գնաց, Յիսուս ասաց. «Ձեզ մօտ երկար չեմ կարող մնալ, շուտով կհեռանամ ձեզանից, բայց դուք իրար այնպէս պիտի սիրէք՝ ինչպէս որ ես՝ ձեզ սիրեցի— սրանով կիմանան, որ դուք իմ աշակերտներն էք»:

Բացի սրանից Յիսուս կամեցաւ մի ուրիշ յիշատակ էլ թողնել, որ երբ ինքն այլևս երկրի վրայ չի լինի, իրան միշտ յիշեն: Ուստի ընթրիքից ետոյ առաւ բաղարջ հաց, օրհնեց, կտտրտեց, աշակետներին բա-

ժանեց և ասաց. «Առէք, կերէք այս է իմ մարմինը»: Ետոյ մաքուր գինին ա-



ռաւ, զօհացաւ, օրհնեց, տուեց նրանց և ասաց. «Խմեցէք զրանից ամենքդ,


սա իմ արիւնն է—ամեն անգամ երբ
այս հացը ուտէք և այս բաժակից
խմէք, յիշեցէք ինձ»:

Մենք էլ այժմ այդպէս ենք ա-
նու՛մ: Տօն օրերին քահանան պատա-
րագ է անում և հացն ու գինին օրհ-
նում: Յանկացողները գնում են ե-
կեղեցի, քահանային խոստովանում
են իրենց մեղքերը և պատարագից
ետոյ հաղորդւում են Յիսուսի մարմ-
նով և արիւնով: Սա միւսնայն է, ինչ
որ Յիսուս վերնատանը կատարեց:

22 ՅԻՍՈՒՍ ԳԵԹՍԵՄԱՆԻ ՊԱՐՏԻՉՈՒՄ

Հացն օրհնելուց ետոյ՝ Յիսուս իւր
աշակերտների հետ դուրս եկաւ Ե-
րուսաղէմից և բարձրացաւ Չիթենեաց
լեռու: Այստեղ Յիսուս ասաց աշա-
կերտներին. «Ինձ այս գիշեր կբռնեն,
իսկ դուք ամենզ էլ կթողնէք ինձ և

կփախչէք»: Բոլոր աշակերտներն էլ
միաբերան ասացին. «Կմեռնենք՝ բայց
քեզ մենակ չենք թողնի ու փախչի»:
Չիթենեաց լեռան կողքին մի պար-



Սա էր Չիթենեաց լեռը, որտեղ Յիսուս ասաց աշակերտներին...

տէ՛գ կար՝ Գեթսեմանի անունով: Յիսուս այստեղ եկաւ և ասաց իւր ա-



շակերտներին. «Նստեցէ՛ք այստեղ, աղօթեցէ՛ք, արթուն կացէ՛ք, չքնէ՛ք, որ

փորձութեան մէջ չընկնէք, իսկ ինքը մի փոքր առաջ գնաց, երեսի վրայ ընկաւ և այսպէս էր աղօթում. «Հայր, եթէ կարելի է, այս շարձարանքը (բաժակը) հեռացրու ինձնից, բայց եթէ չես կամենայ, քո կամքն է»: Յիսուս աղօթքից դարձաւ և տեսաւ, որ աշակերտները քնել են, նորից ասաց. «Արթուն կացէ՛ք և աղօթեցէ՛ք, որ փորձութեան մէջ չընկնէք»: Այս ասաց և դարձեալ հեռացաւ աշակերտներից և նոյն ձևով սկսեց աղօթել: Այն ժամանակ Աստուած ուղարկեց հրեշտակին, որ զօրացնէ՛ Քրիստոսին: Երեք անգամ այսպէս աղօթելուց ետոյ՝ Յիսուս դարձաւ և աշակերտներին էլի քնած գտաւ ու ասաց. «Քանի՛ քնէք, հասաւ ժամը, երբ Յուդան ինձ պիտի մատնէ, վեր կացէ՛ք զընանք, ահա գալիս է նա»:



23. ՅԻՍՈՒՍԻ ՄԱՏՆՈՒԹԻՒՆԸ

Այս խօսքերից ետոյ Յուզան բազմաթիւ զինուորներով ներս մտաւ

պարտէզ՝ սրերով և լապտերներով: Եկողները Յիսուսին չէին ճանաչում, սրա համար Յուզան առաջուց նշան էր տուել, թէ ում որ համբուրեմ, իմացէք Յիսուսը նա է, նրան բռնեցէք: Մատնիչը մօտեցաւ Յիսուսին, համբուրեց և ասաց «Բարև վարդապետ»: Յիսուս պատասխանեց. «Յուզա, համբուրելով ես մատնում ինձ:» Այն ժամանակ զինուորները մօտեցան Յիսուսին, բռնեցին և կապեցին, իսկ աշակերտները թողին և փախան:


24. ՅԻՍՈՒՍ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ ԱՌԱՋ

Զինուորները Յիսուսին կապած տարան քահանայապետի մօտ: Այստեղ ժողոված էին Քրիստոսի թշնամիները, որ նրա համար մահու պատիժ նշանակեն: Քրիստոս, ի հարկէ արդար էր—նա Աստուած էր, բացի լաւութիւնից ոչ մէկին վատութիւն

չէր արել, բայց նրա թշնամիներն ուզում էին, որ մեղաւոր դուրս բերեն, որպէսզի կարողանան սպանել տալ, դրա համար սուտ վկաներ պատրաստեցին, որոնք հաստատում էին, թէ Յիսուս Աստծուն հայհոյել է. իսկ Աստծուն հայհոյողին, հրէաների օրէնքով, սպանում էին: Այստեղ թքեցին Յիսուսի երեսին, բռունցքով ծեծեցին, ծաղրեցին և մինչև լուսանալը շարշարեցին:

25. ՅՈՒԴԱՅԻ ՄԱՀԸ

Յուզան երբ տեսաւ, որ իւր մատնութիւնով վճռեցին սպանել Յիսուսին, խիղճը տանջեց, վեր առաւ երեսուն արծաթը, տարաւ ետ տուեց քահանայապետներին և ասաց. «Ես սխալուեցի, անմեղ մարդու մատնեցի»: Նրանք էլ պատասխանեցին. «Մեզ ինչ, դու գիտես, ինչ ուզում ես արա»: Յու-




դան, երբ տեսաւ որ Յիսուսին չի կարող օգնել, փողը ձգեց քահանաների առաջ և գնաց խեղդուեց, որովհետև քանի յիշում էր Յիսուսի արած լաւութիւնները և իր վատութիւնը, չգիտէր թէ ինչ անէր, քուն չունէր, հանգստութիւն չունէր:

26. ՅԻՍՈՒՍ ՊԻՂԱՏՈՍԻ ԱՌԱՋ

Հինգշաբթի գիշեր հրէաները Յիսուսի համար իրանց օրէնքով մահուան վճիռնշանակեցին, բայց մինչև որ երկրի մեծ դատաւոր Պիղատոսն իրանց վճիռը չհաստատէր, իրաւունք չունէին Յիսուսին սպանել, ուստի ուրբաթ առաւօտը վաղ կապած տարան Պիղատոս դատաւորի մօտ, որ իրանց վճիռը հաստատէ:

Պիղատոսը դուրս եկաւ նրանց մօտ և ասաց՝ «Ի՞նչ գանգատ ու-

նիք այս մարդու վրայ»: Նրանք պա-



տասխանեցին. «Մա ժողովրդին մոլորեցնում է, ասում է թագաւորին հարկ

մի տաք և իրան թագաւոր է անուանում»: Այս որ լսեց Պիղատոսը՝ Յիսուսին ներս տարաւ իւր սենեակը, քննեց և տեսաւ, որ բոլորն էլ սուտ է — նախանձում են, որ Յիսուս իրանցից լաւ է քարոզում և իրանց սխալները բռնում է: Պիղատոսը գուրս բերաւ Յիսուսին և յայտնեց հրէաներին, որ նա արդար է:

Քահանայապետները և ժողովուրդը, երբ տեսան որ Յիսուս պիտի ազատուի, սկսեցին աւելի բարձր աղաղակել և ասել. «Եթէ դու մեր վճիռը չես հաստատի, մենք կայսեր մօտ քեզնից գանգատ կանենք»: Պիղատոսը վախեցաւ հրէաներից՝ չլինի թէ իրա մասին էլ այսպիսի ստեր հնարեն և մէկ էլ չէր ուզում մի մարդու համար հրէաների մեծամեծներին նեղացնել, ուստի վեր առաւ ջուր, ձեռները լուաց նրանց առաջ և ասաց.

«Ես Յիսուսին մեղաւոր չեմ գտնում, դուք գիտէք, տարէք ինչ ուզում էք արէք — խաչեցէք»: Ժողովուրդը միաբերան աղաղակեց և ասաց. «Թող դրա արիւնը մեր և մեր որդւոց գլխին լինի:»

27. ՅԻՍՈՒՍԻ ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆԸ


Երբ հրէաները Յիսուսին խաչելու հրամանն ստացան, հէնց նոյն օրը՝ առաւօտեան, զինուորները վեր առան նրան և տարան, որ խաչեն:

Երուսաղէմի մօտ մի բլուր կար՝ անունը Գողգոթա: Որոշեցին, որ Յիսուսին այնտեղ խաչեն:

Յիսուսը ինքն էր տանում իւր խաչափայտը. նա շատ էր յոգնել, որովհետեւ ամբողջ հինգշաբթի գիշերը չէր քնել, ուստի ճանապարհին վայր ընկաւ խաչափայտի տակ:

Երբ Գողգոթա հասան, Յիսուսի ձեռները և ոտները խաչի վրայ մե-

խեցին—խաչեցին: Պիղատոսը խաչի



վերևում մի տախտակ կպցնել տուեց
և նրա վրայ գրել տուեց, թէ Յիսու-

սին ինչու են պատժում: Տախտակի
վրայ գրուած էր—«Յիսուս Նազով-
րեցի Հրէաների Թագաւոր»: Յիսու-



սի հետ երկու աւագակ էլ խաչեցին,
մինը նրա աջ կողմում, իսկ միւսը՝
ձախ:

Երբ Յիսուսին խաչեցին, նա չէր
բարկանում հրէաների վրայ, այլ աղօ-



թում էր նրանց համար և խնդրում

էր Հայր Աստծուն, որ ներէ նրանց
սխալը, իսկ հրէաները ընդհակառակը
ծաղրում էին Յիսուսին և ասում.
«Եթէ դու Աստուած ես, եթէ դու հրէ-
աների թագաւորն ես, ի՞նչու չես ազա-
տում քեզ»:

Յիսուսի խաչի մօտ էին կանգնած
նրա մայրը և Յովհաննէս աշակերտը:
Յիսուս մտածում էր մօր համար և
ցաւում էր նրա վրայ. ուստի Յովհան-
նէսին յանձնեց, որ պահէ մօրը: Այն
օրից սկսած՝ Մարիամը Յովհաննէսի
մօտն էր ապրում մինչև իւր մահը:

Առաւօտեան ժամը իննին խաչե-
ցին Յիսուսին, իսկ ժամը երեքին՝ ճա-
շից ետոյ ասաց. «Ծարաւ եմ»: Զի-
նուորներէից մինը խղճաց նրան, սպուն-
գը բացախի մէջ թաթախեց և Յիսու-
սի շրթուներին մօտեցրեց, որ ճաշակէ
և ցաւը մեղմէ:

Սրանից ետոյ Յիսուս բարձր ճայ-
նով ասաց. «Հայր, հոգիս քեզ եմ
յանձնուում»: Այս ասաց, գլուխը կա-
խեց և հոգին աւանդեց:

Այդ միջոցին երկիրը շարժուեց,
ժայռերը պատառուեցան և շատ ար-
դարներ գերեզմաններից յարուժիւն
առան: Այս որ տեսան, ամենքը լաց
էին լինում և ասում էին. «Ուղիղ որ
Յիսուս Աստծու որդի է և մենք նը-
րան ի գուր տեղը խաչեցինք»:

Խաչելու ժամանակ

Խաչի քո Քրիստոս երկրպագանեմք և
զուրք խաչելութիւնդ քո մեծացուցանեմք և ըզ-
սուրք թաղումդ քո փառաւորեմք:

Քրիստոս, քո խաչին երկրպագութիւն ենք
տալիս և քո սուրբ խաչելութիւնը մեծացնում
ենք (յարգում ենք), իսկ քո սուրբ թաղումը
փառաւորում ենք:

Նկայք հաւատացեալք երկրպագեսցուք Քրիս-

տոսի Աստուծոյ մերոյ, վասն զի եկն ի ձեռն
խաչին իւրոյ, շնորհեաց զպարգես աշխարհի:

Նկէք, ով հաւատացեալներ, երկրպագութիւն
տանք մեր Քրիստոս Աստծուն, որովհետև նա
եկաւ և իւր խաչոյն աշխարհիս պարգևներ շնորհեց:

Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ
և անմահ, որ խաչեցար վասն մեր ողոր-
մեա մեզ:

28. Թ Ա Ղ Ո Ի Մ

Ուրբաթ երեկոյ Յիսուս մեռաւ:
Միւս օրը շաբաթ էր և հրէաների
զատիկն էր-եթէ Յիսուսին խաչի վրայ
տեսնէին, հանգիստ սրտով հաց չէին
ուտի, դրա համար էլ գնացին Պիղա-
տոսի մօտ և խնդրեցին, որ իրաւունք
տայ Յիսուսի մարմինը խաչի վրա-
յից վերցնելու: Պիղատոսը, երբ իմա-
ցաւ, որ Յիսուս մեռել է, իրաւունք
տուեց: Միայն մի քանի զինուորներ

ուղարկեց Գողգոթա իմանալու՝ ար-
դեօք Յիսուսը մեռել է, թէ՞ ոչ:

Զինուորներից մինը կամեցաւ ճիշտ



իմանալ Յիսուսի մահը, վեր առաւ
գեղարդը, ծակեց կողը, որտեղից ա-
րիւն և ջուր բոխեց:

Սրանից ետոյ մի իշխան մարդ՝
անունը Յովսէփ, որ Յիսուսի ծածուկ
աշակերտն էր, Պիղատոսից խնդրեց,
որ Յիսուսի մարմինն իրան բաշխեն:
Մի ուրիշ աշակերտ էլ՝ Նիկողիմոս
անունով, եկաւ և բերաւ անուշահոտ
խնկեր և կտաւ: Սրանք երկուսով գը-
նացին Գողգոթա, Յիսուսի մարմինը
խաչից վայր բերին, օծեցին, կտա-
ւով պատեցին և թաղեցին:


Այնտեղ, ուր Յիսուսին թաղեցին,
պարտէզ էր, որի մէջ կար մի նոր
փորած գերեզման: Այդ գերեզմանը
Յովսէփը իւր համար էր պատրաստել:
Ահա այստեղ դրին Յիսուսի մարմինը՝
մի մեծ քար էլ գլորեցին դրանն ու
գնացին:

29. ՅԻՍՈՒՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Շաբաթ օրը հրէաները ոչ մի բա-
նի ձեռք չեն տալիս, սրա համար էլ

այդ օրը ոչ ոք չգնաց Յիսուսի գերեզմանը տեսնելու: Բայց երբ շաբաթն անցաւ՝ կիւրակէ առաւօտը շատ վաղ՝ դեռ արևը դուրս չեկած, Մարիամ Մակիթաղենացին և երկու ուրիշ կանայք զանազան անուշահոտ խնկեր պատրաստեցին և եկան, որ Քրիստոսի մարմինն օծեն:

Կանայք ճանապարհին ասում էին միմեանց: «Ո՛վ կգլորէ գերեզմանի բերանի մեծ քարը»: Բայց երբ մօտեցան, տեսան, որ քարը դէն էր ձրգած գերեզմանի բերանից: Մարիամ Մակիթաղենացին վազեց աշակերտների մօտ իմաց տալու այս բանը, իսկ միւսները գերեզմանը մտան և տեսան, որ մի երիտասարդ նստած է գերեզմանի վրայ աջ կողմում՝ սպիտակ շորերով—դա հրեշտակն էր: Կանայք վախեցան: Հրեշտակն ասաց նրանց. «Մի վախենար, ես գիտեմ դուք



Խաչուած Յիսուսին էք որոնում, բայց ի՞նչու էք կենդանին մեռելների մէջ

փնտռում: Նա այստեղ չէ, յարութիւն
առաւ: Գնացէք, ասացէք նրա աշա-
կերտներին, թէ Յիսուս նրանցից ա-
ռաջ կգնայ Գալիլիա, դուք այնտեղ
կգտնէք նրան, ինչպէս որ ինքն էլ
առաջուց ասել է»:

Խաչի քո Բրիստոս երկիրպագանեմք
Եւ զսուրբ Թաղումն քո մեծացուցանեմք
Եւ զսուրբ յարութիւնն քո փառաւորեմք:

Փառք սուրբ խաչին, այլ լուիս,
Սրբոյ Թաղմանն, այլ լուիս,
Սուրբ յարութեանն, այլ լուիս:

Բրիստոս յարեալ 'ի մեռելոց, մահուամբ
զմահ կոխեաց եւ յարութեամբն իւրով մեզ ըզ-
կեանս պարգեւեաց, նմա փառք յաւիտեանս. ամէն:

Բրիստոս մեռելներից յարութիւն առաւ, (իւր)
մահով յաղթեց մահուան, իսկ յարութիւնով մեզ
կեանք պարգևեց, նրան փառք լինի յաւիտեանս:
Ամէն:

30. ՅԻՍՈՒՄԻ: ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ

Յարութիւնից ետոյ Յիսուս 40 օր
էլի մնաց երկրիս վրայ և շատ անգամ
տեսնուեց իւր աշակերտների հետ:
Քառասուն օրից ետոյ Յիսուս իւր
աշակերտներին տարաւ Չիթենեաց
լեառը և ասաց. «Երուսաղէմից չհե-
ռանաք, այլ սպասեցէք այնտեղ մին-
չև Հայր Աստուած ձեզ կուղարկէ
Սուրբ Հոգին: Երբ Սուրբ Հոգին եր-
կնքից ձեզ վրայ կիջնէ, դուք իսկոյն
զօրութիւն կստանաք՝ ուրիշ մարդիկ
կղաւնաք, ետոյ կերթաք Երուսաղէմ,
Հրէաստան և միւս երկրները և ամեն
տեղ կքարոզէք մարդկանց իմ մա-
սին: Ով ձեր քարոզները կլսէ, նրան
կմկրտէք Հօր, Որդու և Սուրբ Հոգու
անունով: Սովորցրէք նրանց այն ա-
մենը, ինչ որ ինձնից սովորել էք: Ով
ձեզ կհաւատայ և կը մկրտուի, կա-

զատուի մեղքերից, իսկ ով չի հաւատայ, կպատժուի»: Այնուհետև օրհնեց իւր աշակերտներին և երկինք բարձ-



րացաւ: Օրհնելու ժամանակ մի ամպ եկաւ և ծածկեց նրան՝ այնպէս որ աշակերտներն այլ ևս չտեսան Յի-

սուսին: Նրանք երկրպագեցին և ուրախ-ուրախ ետ դարձան Երուսաղէմ և ամեն օր տաճարում օրհնում էին Աստծուն ու սպասում էին Սուրբ Հոգուն.

Համբարձման տօնը կատարում ենք Զատիկից 40 օր ետոյ:

31. Հ Ո Գ Ե Գ Ա Լ Ո Ի Ս Տ

Համբարձումից ետոյ առաքեալները դարձան Երուսաղէմ և միշտ միասին էին: Տասն օրից ետոյ երկնքից յանկարծակի մի ձայն լսուեց՝ սաստիկ փշող քամու նման և լցրեց այն տունը, որտեղ նստած էին աշակերտները: Ետոյ առանձին-առանձին կրակի նման լեզուներ երևացին իւրաքանչիւրի գլխի վրայ: Առաքեալները լցուեցան Սուրբ Հոգով, շնորհներ ստացան և սկսան զանազան լեզուներով խօսել:

Այդ ժամանակ Երուսաղէմում կային, բացի Երուսաղէմաց իհրէաներից,



նաև աշխարհիս ամեն կողմերից եկած շատ բարեպաշտ հրէաներ, որոնք ուխտ

էին եկել: Երբ երկնքից իջնող ճայնը լսուեց, ժողովուրդը մի տեղ հաւաքուեց: Աշակերտներն սկսեցին ամեն մարդու հետ իւր լեզուով խօսել: Ամենքը զարմացած լսում էին, թէ առաքեալներն ինչպէս ուրիշ-ուրիշ լեզուներով էին խօսում: Ոչ ոք չէր հաւատում իւր տեսածին, սրա համար էլ մինը միւսին հարցնում էր. «Ձե՞ որ այս խօսողները բոլորն էլ գալիլիացիներ են, տեսէք ինչպէս մեր լեզուներով խօսում և պատմում են Աստծու մեծամեծ գործերը—այս ի՞նչ պէտք է լինի»: Իսկ ոմանք էլ ծաղրում էին և ասում. «Երևի սրանք հարած են»:

Այն ժամանակ Պետրոս առաքեալը տեղից վեր կացաւ և սկսեց այսպէս խօսել. «Ով հրէաստանցիներ և Երուսաղէմում բնակուողներ, լաւ լսեցէք

ինչ որ ձեզ քարոզելու եմ. մենք հար-
բած չենք, ինչպէս կարծում էք, որով-



հետև դեռ առաւօտեան ժամի 9-ն է:
Լսեցէք, ո՞վ իսրայէլացիներ, Աստուած

Յիսուսն ազովրեցուն աշխարհ ուղար-
կեց. նա եկաւ և ձեր մէջ հրաշքներ
գործեց: Թէև դուք նրան խաչեցիք,
բայց նա երեք օրից ետոյ յարութիւն
առաւ, երկինք համբարձաւ և մեզ
համար Սուրբ Հոգին ուղարկեց: Այժմ
մենք, որ զանազան լեզուներով ենք
խօսում, դա ոչ թէ մեր շնորհն է,
այլ՝ Սուրբ Հոգու: Երբ այս քարոզը
լսեց ժողովուրդը, զղջաց: Շատերը
գալիս էին Պետրոսի և միւս առա-
քեալների մօտ ու հարցնում էին.
«Ի՞նչ անենք»: Պետրոսն էլ ասում էր
նրանց. «Ապաշխարեցէք և մկրտուե-
ցէք Յիսուս Քրիստոսի անունով: Ով
կմկրտուի, Սուրբ Հոգու շնորհը կըն-
դունի»: Այդ օրը երեք հազար մար-
դիկ հաւատացին Պետրոսի խօսքերին,
մկրտուեցին և բրիստոնեայ դարձան:



Հոգեգալստեան տօնը կատարում ենք Զատ-
կից 50 օր ետոյ:

26.	Յիսուս Պիղատոսի առաջ	52
27.	Յիսուսի խաչելութիւնը	55
28.	Թաղում	61
29.	Յիսուսի յարութիւն	63
30.	Յիսուսի համբարձումք	67
31.	Հոգեգալուստ	69

1
2
3
4
5
6
7
8
9
10
11
12
13
14
15
16
17
18
19
20
21
22
23
24
25



24. Գրքի ներածություն	29
25. Գրքի ներածություն	33
26. Գրքի ներածություն	37
27. Գրքի ներածություն	41
28. Գրքի ներածություն	45
29. Գրքի ներածություն	49
30. Գրքի ներածություն	53
31. Գրքի ներածություն	57
32. Գրքի ներածություն	61



418



0026895



2013

« Ազգային գրադարան



NL0026895

С 9702
4082

ՀԱՅԿՈՏԵՐ
ԻՆ ՏԻՒՄԿԱ
ՎՕՏՈՒՈՎԵԴԵՆՆԻ
Академия Наук
СССР

ՄԻ ԱՇԽԱՏԱՄԻՐՈՒԹԵԱՄԲ ԼՈՅՅ ԵՆ ՏԵՍԵԼ ԿՐՕՆԻ ՀԵՏԵԻՑԱԼ
ԴԱՍԱԳՐԵՐԸ

I. ՈՒՍՈՒՑՉԱՑ ՀԱՄԱՐ

ԳԻՆՆ Է ԶԵՂԶ.

Ստորին շրջան

1. Հին-ուխտի նիւթի մշակութ. մասն ա.	»	80	25
2. Հին-ուխտի նիւթի մշակութ. մասն բ.	»	85	25
3. Նոր-ուխտի նիւթի մշակութ. մասն ա.	1	»	35
4. Նոր-ուխտի նիւթի մշակութ. մասն բ.	1	5	35

Միջին շրջան

5. Ուսուցումն քրիստոն. կրօնի հատ. Դ.	1	50	35
6. Ուսուցումն քրիստոն. կրօնի հատ. Ե.	»	50	35
7. Տասն պատուիրան	»	50	35

II. ԱՇԽԱՏԱՄԻՐՈՒԹԵԱՄԲ

8. Դասատետր կրօնի (պատկ.) ա. տարի	»	27	25
9. Դասատետր կրօնի . . . բ. տարի	»	20	20
10. Դասատետր կրօնի . . . գ. տարի	»	30	20
11. Սրբազան պատմ. հին-ուխտի (պատկ.)	»	50	25
12. Սրբազան պատմութիւն նոր-ուխտի	»	40	20
13. Գործք առաքելոց	»	40	20
14. Բարոյախօսութիւն	»	50	25
15. Մի քանի խօսք հայ կրօնուսոյցներին	»	10	25

Ցանկացողները կարող են դիմել—

1. Тифлисъ—Бебутовск. ул. № 20. Прот. С. Саакянцъ,
2. " Книжная торговля „Гуттембергъ“,
3. " Книжная торговля „Центральная“,
4. " Дворцовая, магазинъ „Міасникова“,
5. " Книжная торговля „Тараянцъ“.

ԳԻՆՆ Է 27 ԿՈՊ.